

տակներնուն վրայ ծանր տուրքեր դնել, կաշառ ուտել, ու բամբասուիլ օտար աղգերէն, ու իրենց ժողովուրդը իրենց թշնամի ընել: Թէ որ չես գիտեր ի՞նչ ըլլալը, ես քեզի ըսեմ: Թագաւորները մարդկանց հետ կը կենցաղավարին, մարդկանցմէ խորհուրդ կը լսեն, իրենք ալ մարդիկ են. ուստի երբեք հպարտութեան համար, երբեք ալ խոհեմութիւննին պակաս ըլլալէն, կը կարծեն ու կը լսեն ալ ուրիշներէն՝ որ հարստութիւնն է իրենց անունը մեծցընողը, յիշատակնին չմնար թէ որ պատերազմ չընեն, ու Հռոմայու կայսեր իրաւունք կը սեպեն՝ բոլոր աշխարհքի տիրելը. աս անիրաւ մտածմունքը՝ իրաւամբ կորսնցընել կու տայ ունեցածնին. կրնային հանգիստ ապրիլ իրենց ունեցած հարստութեամբը, կ'աղքատնան պատերազմ ընելով. կրնային սիրելի ըլլալ ամենուն, ատելի կ'ըլլան. կրնային վայելիլ ապահովապէս իրենց կեանքը, զիրենք վտանգի կը դնեն. ամենքը իրենց կարօտ ըլլալուն տեղը, իրենք ամենուն կարօտ կ'ըլլան: Ի՞նչ փնտրէ կրնային ընել թագաւորութեան մը թշնամիները՝ իր զօրքին ըրածէն ետեւ: Թշնամիները սահմանադուր կը կողոպտեն, մերինները բոլոր տէրութիւնը. անոնց կրնանք դէմ դնել, ասոնց և ոչ կրնանք դէմ խօսիլ. թշնամիները օր մը միայն կու գան կը յափրշտուեն կ'երթան, իսկ մերինները ամեն օր կը գողնան ու միշտ հետերնիս են. անոնք վախ ունին մեզմէ, ասոնք և ոչ կ'ամաչեն: Աւելի կը վախնամ հարիւր զինուորի գունդ մը կազմել, քան թէ յիսուն հազար թշնամեաց դէմ պատերազմ ընել. վասն զի հոն մէկ ժամու մէջ աղէկ կամ գէշ կը լինայ՝ ինչ որ բախտը որոշեր է. իսկ ասոնց հետ բոլոր կեանքս կը մաշի:

Ի՞նչ ընեմ ուրեմն, իմն Կուռնելիէ, ասանկ է ու ասանկ պիտոր ըլլայ. ասանկ գտայ, ասանկ ալ պիտոր թողում: Աստուածները արդար են. որովհետեւ մենք անիրաւաբար չարիք կ'ընենք ուրիշներուն երկրին մէջ, իրաւամբ թող

կու տան որ մերիններն ալ մեզի չարիք ընեն: Աս գրածներս քեզի օգուտ մը չեն ըներ, բայց գրելովս կը հանգչիմ: Կը խնդրեմ աստուածներէն որ քեզի բարի կեանք տան, ինծի ալ բարի մահ: Քուկին Մարկոսդ է որ իր Կուռնելիոսին կը գրէ:

Յարմար պատասխան.

Յովսէփ ու Բենեդիկտոս, երկու արուեստաւոր երիտասարդներ, օր մը անցնելով գեղի մը բանջարեղէնի պարտիզի մը քովէն, ըսաւ Յովսէփ իր ընկերոյը. Նայէ Բենեդիկտոս, ի՞նչ մեծ կաղամբ մը կայ աս պարտէզին մէջ, ամենէն չեմ յիշեր որ կենացս մէջ նմանը տեսած ըլլամ: Իրաւցընէ մեծ է, ըսաւ Բենեդիկտոս, բայց ան աստիճանի չէ ինչ որ ես Գաղղիա եղած ատենս մէկ մը տեսեր եմ, որ մեր ժողովրդապետին տնէն ոչ ինչ նուազ պզտիկ էր: — Ան ալ չափազանց է, պատասխանեց Յովսէփ, որ արուեստիւ պղնձագործ էր. սակայն ես ալ կը յիշեմ որ ատենօք սա դիմացի եկեղեցւոյն չափ մեծ կաթսայ մը շիներ եմ: — Ի՞նչ կ'ըսես, կանչեց Բենեդիկտոս զարմանալով մը, ու ի՞նչ միտքդ եկաւ որ ատ մեծ կաթսան շինեցիր: — Քու տեսած կաղամբդ մէջը եփելու համար, պատասխանեց Յովսէփ:

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Վիճակագրականք. — Բարիք քաղաքին հիմակուան բնակիչը իբր 1,800,000 կը հաշուի:

Անցեալ տարուան վիճակագիր ցուցակին մէջ նշանաւոր է հոկտեմբեր ամսուն ծննդոց և վախճանելոց տրուած տեղեկութիւնը որ մայրաքաղաքին քոլերայի բռնուած ամիսն էր: Տարւոյն առջի ինը ամիսներու մէջ ծնունդը միշտ ի վեր էր քան